

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւած 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկէն:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատուն մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք ռ ռ № 258.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՌԵՆԻ

Խմբագրութիւնը ըստ է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):

Թայտարարութիւն ընդունւում է առանձին լիցիւզի.

Թայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք ռ ռ № 258.

Այսօր, կիրակի, առաւ 14 ին, Աւետեաց Զրաշէն եկեղեցւում, պատարագից յետոյ, ժամի 11 1/2-ին, Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի ուսուցչական խումբը կատարելու է Պետերբուրգում վախճան ված նախկին ուսուցիչ

ԽՐԻՍՏԱՓՕՐ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՅԻ

հոգեհանգիստը Հանգուցեալի բարեկամները և ընկերները հրաւիրւում են ներկայ լինելու:

1—1

Վարդուհի Գէորգեան և Թովմաս Մկրտչեան Ծաղկեղենները, ցաւօք սրտի յայտնելով առաջինը՝ իր սիրելի հարսգատ եղբոր, երկրորդը՝ իր աներոջ որդի

ԲԱԳՐԱՏ ԳԵՈՐԳԵԱՆ ԳԱՐԵԾԷԼԵԱՆՅԻ

մահը, խնդրում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին իրանց ներկայութեամբ յարգել հանգուցեալի յուզարկաւորութիւնը և թաղումը: Թուղարկաւորութիւնը հոկտեմբերի 14-ին, առաւօտեան 10 ժամին դէպի Մոզնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը խօշիվանքի գերեզմանատանը: Բնակարանը Մայայա-Օրբելեանօվսկայա փողոց, տ. գնդապետ Կրամարենկոյի:

Ամբիճը կը լինի շաբաթ երկուշաբթի, ժամը 8-ին:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ գրոյց. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հ. Լինչի գործը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Եթէ չէ՞ք մոռցել, ընթերցող, իմ զրոյցներէ մէկի մէջ ես համեմատում էի հայերին վրացիներ հետ:

Այդ զրոյցը տպւեց ամառ: Վրաց Հրատարակչական ընկերութեան տպարանն էր առիթը: Հայը փող է տալիս տոկոսով. վրացին պարտք է անում նրանից եւ բաց է անում մեծ, փառաւոր տպարան, առաջինը մեր երկրում: Ունի է ապագան, հարցնում էի ես:

Եթէ յիշում էք, ես երկրորդ անգամ դիմեցի այս հարցին, որովհետեւ իմ առաջին յօդուածը գրեւոր էր ազգասէր հայերին: Պէտք

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ. Լ Ի Ն Զ Ի Գ Ո Ր Ծ Ը

Անգլիական մամուլը դեռ չարունակում է դրազկել Հ. Լինչի «Armenia» գրքով: «Թայմզ», «Մասնագրք» եւ ուրիշ թերթեր վերադառնում են չարժանի յօդուածներ նուիրեցին աւելի մանրամասն տեղեկութիւն տալով գրքի պարունակութեան վրա: Յայտնւում է, որ պարոն Լինչի նպատակն է եղել անգլիական քաղաքագէտներին ըմբռնել տալ, թէ Հայաստանը իր աշխարհագրական տեսակէտից քաղաքական յատուկ կարեւորութիւն ունի, եւ յոյս է տաւ, թէ վերջ ի վերջոյ Անգլիան եւ Գերմանիան մի օր պիտի լաւ համոզվեն այս ճշմարտութեան եւ ի սէր իրանց քաղաքական շահերին լուծունի տան այդ խնդրին, թէ եւ այդ կարող է պատահել հետագայ ապագայում:

«The World» ասում է այս մասին. «Թող մեզ ներքի խոստովանել, թէ լիովին չէինք իրաւորել Հայաստանի կարեւորութիւնը մինչեւ որ ձեռք չառանք պ. Հ. Լինչի «Ճանապարհորդութիւնները եւ ուսումնասիրութիւնները»-ը այդ երկրի նկատմամբ: Ստուարտութեան, ծանրութեան եւ պարունակութիւնների մանրամասնութեան կողմից ճանապարհորդական ա-

յը ցոյց տալ, թէ հրեան ողորմելի է մեր ազգային մեծածառութիւնը, որ վերաւորվում ենք, երբ մէկ պարզ ապացոյցանում է, թէ մեզանից յետ միացածները առաջանում են, մեզ յետ թողնում, մինչդեռ մենք գոմէլային ինքնագոյնութեամբ երեւակայում ենք, թէ ամենքից մեծ ու երջանիկ ենք, որովհետեւ փող ունենք:

Ինչ ոգուտ այդ փողից, երբ մենք հոգով աղքատներ ենք: Փող ունենք, այն. բայց քանի քանի բաներից ենք զուրկ: Չունենք լիզու, չունենք ազգային գիտակցութիւն եւ բարեխղճութիւն, չունենք կուլտուրական հիմնարկութիւններ: Բանկ, նաւթի ֆոնտան այն. Բայց յետոյ:

Ես վերջանում էի իմ այդ զրոյցը հետեւեալ խօսքերով. «Մի ուրիշ անգամ գտնե՛ք տեսնե՛ք ձեզ համեմատած ձեր հարեւան թուրքի հետ»:

Այսօր ես կատարում խոստումս: Որովհետեւ այսօր է, որ մի իսկապէս լաւ թուրքի գործերը պիտի արժանաւոր մեծարանքի առարկայ դառնան:

Այդ թուրքը բազուցի միլիոնաւոր Հալի Զէյնալ-Արզին Թաղիւն է: Մի մարդ, որ

մենավիթխարի գիրքն է, որ երբ եւ իցե մեր ուշադրութեան յանձնված լինի: Խնդրի ապագեցնող կէտը այն է, որ այժմ եւ հմտութեան այս արտաքին կարգի վառնումը, դեռ ոչինչ չենք ասում ծախքերի մասին, նուիրված է Հայաստանին... Միակ շարժառիթը այս աշխատասիրութեան, հեղինակի խօսքով, եղած է այն թէ «Իրան թուում էր, որ հաւանօրէն Հայաստանում կարելի էր գտնել լուծումը քաղաքականութեան այն հանգրային, որ տարեց տարի պիտի սեղմում է այս երկրների յուրջը (այսինքն Հնդկաստանի արեւմուտը): Եթէ այս գուշակութիւնը ճշմարիտ դուրս գայ, այն ժամանակ պ. Լինչի հատորները, ստուգիւ, պիտի համարվեն իբր օգտակար դասագիրք: Իայց յիշել պարոն Լինչի չափազանցված կարծիք ունի արդեօք Հայաստանի գիրքի նկատմամբ աշխարհիս վրա: Նա անտարակոյս մի օր կրկին ձեռք պիտի բերէ իր գիրքը, բայց այդ օրը շատ մօտիկ չէ երեւում»:

Ապառախ «Westminster Gazette» գրում է ի միջի այլոց. «Լինչ արժանի է շնորհաւորութեան՝ արտադրելու համար ամենալաւ ամենակատարեալ եւ անկողնակալ տեղեկութիւն Ռուսաստանի եւ Թուրքիոյ հայկական գաւառների մասին... Նա ձեռք է տուել խնդիրն ամեն մի երեւակային տեսակէտից: Յիշել կրօն, քաղաքականութիւն, աշխարհագրութիւն եւ հնախօսութիւն՝ բոլորը մտնում են այս հատորների մէջ... Նա բարձրացել է ոչ միայն

յայտնի է ոչ թէ իր միլիոններով, այլ իր կատարած գործերով:

Նա ուսումն չէ ստացել. նա, ինչպէս ասում են, անգրագէտ է: Բայց բնական խելքը, միացած կարեկից արտի հետ, աւելի մեծ գործեր է կատարում, քան պատենտաւոր ուսումը:

Բազու մանողին ապշեցնում է անգլիկ տրանսիւրի բազմութիւնը: Ով կարողացել է պատեր է բարձրացրել, չինել է վարձով տալու սենեակներ, խանութներ, պահեստներ: Առեւտրական—չառագործական նպատակն է այդ մեծ շինութիւնները հրաշակեալ: Պալատների, վիթխարի պատածների մէջ դուք կը տեսնէք միայն մի հատ թատրոնական դահլիճ, եւ դրա կառուցանողը Թաղիւնն է:

Միլիոնների քաղաք անասելի աղքատ է կրթական—կուլտուրական հիմնարկութիւնների կողմից: Տարիներ առաջ, երբ Թաղիւնի թատրոնը միանգամայն անպէտքացի էր, բազուցին ներկայացումներ տեսնում էր տեղական ջիւրիւմ, մի խայտառակ շինութեան մէջ, ուր կարող է նստել միայն չափազանց անձար մարդը: Բազուցին անձար էր. եթէ չը լինէր այդ ջիւրիւն էլ, նա պիտի թատրոնական ներկայացումներ տեսնէր բաց երկնքի տակ: Ինչո՞ւ Չորս կողմում հարկւրաւոր վիթխարի շինութիւններ էին շինվում, նոյն իսկ պարսիկ ճարտարներն էլ երկտարակաւութեամբ էր լուսաւորում իր խանութը, եւ ոչ ոք չէր մտածում թատրոնի համար մի լաւ շինութիւն կառուցանել:

Ինչն էր պակասում: Միլիոններ: Ոչ. Պակասում էր հասարակաց բարձրի հասկացողութիւնը, Թատրոն... Ինչ բան է դա: Կարող է բերել մէկին տառը տոկոս: Ո՛չ. Երկնքը, ուրեմն, փառաւոր մագաղաններ, բաղնիքներ, հիւրանոցներ:

Մեր գաւառական քաղաքներից մէկում տեղի է ունեցել հետեւեալ դէպքը: Դպրոցում սովորող որդին պատմում է հօր մօտ, թէ ինչ մեծ խելք է ունեցել Սօկրատը, ինչքան հոշակաւոր է նա: Հայրը լուծւ է պատանեկական ողբերգութեամբ կենդանացրած պատմութիւնը մեծ փրկօթի մասին եւ յանկարծ ընդհատում է նրան ու հարցնում.

—Ո՛րքան ոռճիկ էր ստանում այդ Սօկրատը...

Հասկանում էք: Գործնական խելքի տէր հայը այսպէս է դատում. եթէ այդքան խելօք ու մեծ էր Սօկրատը՝ նա, ուրեմն, պիտի ահագին ոռճիկ էլ ստանար: Ուրիշ չափ չը կայ այդ խելքը, գիտականութիւնը ըմբռնելու հա-

Արարատ լեռան վրա, այլ նաեւ այն չեղ լեռների բոլոր շղթաների՝ որ ընկնում են Սեւ ծովի արեւմտակողմեան դաշտերի ու լճակների շրջը: Նա նկարել է հին եկեղեցիները իրանց արտաքին ճարտարապետական գեղեցկութիւններով... Նա նկատում է այդ երկրը իբր մի մեծ արքունի ճանապարհ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, չիրականացած անհուն հաւանականութիւնների մի երկրի, եթէ միայն կարելի լինէր ազատել նրան թրքական ժանդարմներից... Գիրքը ունի զանազան նպատակներ եւ պէտք ունի ուշադիր ընթերցման, եթէ ուզում ենք հասկանալ հեղինակի պահանջները: Մի գուրդը յայտնի համարձակ ուղեցոյց է, միւսը շրջապայութիւն՝ պատմութեան, քաղաքականութեան կամ աշխարհագրութեան մէջ: Գարտեգները բազմաթիւ են, եւ լուսանկարները տպված են ամենաքաջանշան եւ գեղեցիկ ճաշակով:

Պ. Լինչ, ընդհանուր կերպով, արդեօք ինչ է տեղեկագրում հայերի եւ նրանց ճակատագրի մասին: Ընդհանուր առմամբ, նա աւելի է հաւանում նրանց քան ուրիշ ուղեւորները: Գրքի թողած ամբողջական տպաւորութիւնը, ստուգիւ այն է, թէ հայը մի թիւ անձարակ (unselfish) ցեղ է, որովհետեւ այնպիսի բնական հոգեւորութիւններով—որոցով օժտված է նրանց երկրը—մի գործը կամքի տէր ժողովուրդ չէր յաղթահարվի նոյն իսկ թրքական ճնշումներէն. ինքը պ. Լինչն էլ ընդունում է

մար: Ամեն հասկացողութիւն մեզանում փողի է վերածվում, եւ հէնց այդ է պատճառը, որ մենք հասկացողութիւններ չունենք, այլ միայն նիւթական չափի չափ: Որքան մեծ է այդ չափը, այնքան համակրելի ու հասկանալի է ձեռնարկութիւնը:

Այդ իսկ պատճառով էր, որ Բազուն իր դարձարուն միլիոնաւորներով նստում էր ախոռի նմանութիւն եւ անուշահոտութիւններ ունեցող ջիւրիւմ եւ տեսնում էր ներկայացումներ: Նա չէր զգում, թէ հրեան ամօթալի բան է դա: Օգնութեան հասաւ նոյն Թաղիւնը, վերանորոգեց իր թատրոնը, յարմարեցրեց եւ այժմ նաւթային մայրաքաղաքն ունի մի թատրոնական շինութիւն, որ կարող է պարզ անել նրա երեսը: Ես ինչու եմ, թէ ինչ ողբերգութիւն էր պատու Թաղիւնի, երբ առաջին ներկայացումը արվեց նրա վերանորոգված թատրոնում: Եւ այդ արտաբերված, անկեղծ շնորհակալութիւնների մէջ չափազանցութիւն չը կայ: Հաջին կատարեալ բարերար էր հանդիսանում Բազուն ապրող բոլոր ազգութիւնների համար, պահելով բեմ, որի վրա ամեն ազգութիւն կարող էր ներկայացումներ տալ:

Մի ուրիշ օրինակ: Մի ժամանակ Բազուն լուր տարածվեց, թէ ծախվում է տեղական մի հատիկ ամենօրեայ լրագիրը «Ազատի»-ն: Այդ ժամանակն էլ Բազուն լեկ-լեցուն էր հայ ինտելեկտուներով, իսկ հայ կրեոսներէն մէկի մասին պատմում էին, որ նա Պարիզում, մի մեծ խնջոյքի մէջ, տառն հազար է տուել մի ինչ-որ ծաղկած ծառ բերողին (խնջոյքը տեղի ունէր ձմեռը): Մի քանիսները խոսում էին, թէ պէտք է առնել լրագիրը: Բայց ով էր այդպիսի բանի մասին մտածում: Լրագիր... Տպարան... Թատրոն... Ինչ յիմարութիւններ:

Այդպէս չը մտածեց անգրագէտ Հալի Զէյնալ-Արզին Թաղիւնը: Նա տառնակ հազարներ տուեց: Գինց լրագիրը, ապա յանձնեց թուրք գրող բերտասարգութեան, եւ այսօր լրագիրը ոչ միայն նիւթական մեծ օգուտներ է տալիս, այլ եւ միակ մահմադական օրգանն է ամբողջ Կովկասում...

Մէկ մէկ թեւ Թաղիւնի հասարակական գործերը անկարելի է, որովհետեւ շատ երկար կը լինէր նրանց շարքը: Բարեգործական նուիրատուութիւնների մէջ նա առաջինն է իր առաջածնութեամբ: Եթէ չեմ օխտվում, Ախալքալաքի երկրաշարժից փնտրված հայերին նա աւելի շատ տուեց, քան Բազուի հարուստ հայերը: Զէ մոռացվել եւ այն, որ նա այս ամառ

նրանց մէջ տաղանդի պակասութիւն կառավարելու մասին, նաեւ բարոյական ոյժի նուազութիւն: Ոչ էլ երեւում է, թէ նա հերքում է ինչ որ ուրիշները ասել են հայերի նենգաւոր տրամադրութիւնների եւ նրանց անհոգութեան մասին դէպի ուղղամտութիւն: Այս բոլոր շարժառիթներում նրանք ըստ երեւոյթի ցոյց են տալիս ճշմարտ ազգերի սովորական յամակներէրը: Այսու ամենայնիւ պ. Լինչ ի յայտ է բերում նրանց լաւ յատկութիւնները եւ նրանց պատմութեան ու նրանց արուեստի մէջ գրտնում է կուլտուրայի շատ բարձր կարողութիւն: Ինչ էլ լինի նա մեզ թողնում է մեծ տարաւորութիւն մէջ այն տեսակէտից, թէ արդեօք ինչ կարելի է անել հայերի համար: Նա հաստատում է ամենը կամ գրեթէ այն ամենը, ինչ որ կարելի է ասել թրքական ճնշումի առիթով: Թրքական գաւառներում հայերը նշուակ են քրիւդերի յարատեւ անակալութեանը: Նրանց գոյքը, կենսը եւ նրանց կամայնք առնաբանութիւնը վտանգի մէջ են ամեն օր: Սակայն եւ այնպէս, այս ասելիս, նա միանգամայն հաղորդում է, որ հայերը նախամեծար են համարում հպատակել թուրք կառավարութեան մարմնաւոր ստրկութեանը քան թէ բարոյական ու հոգեկան մի ստրկութեանը: Պ. Լինչի կարծիքով հայը երկու կողմի մէջ է, եւ պարտաւորված է ընտրել միւր կամ միւսը. մի կողմից՝ անցաւ ջնջումն եւ ձուլումն, եւ միւս կողմից՝ տեսական անակալութիւն ու քարատի:

30 հազար տուեց, որ Բագուի համար լաւ ջուր գտնելու հետազոտութիւններ կատարվին:

Բայց այդ բոլոր գործերը նսեմանում են այն մեծ գործի առաջ, որ գլուխ բերեց Թաւրիզի եւ Երի նկարագրութիւնը տպւեց «Մշակի» մէջ երկու թէ երեք օր առաջ: Դա մասնագիտական աղբիւրների համար կառուցած դպրոցն է:

Այստեղ արդէն լոկ բարեգործութիւն չէ, այլ եւ քաղաքացիութիւն, հերոսական քաջագործութիւն: Եւ հիացմունքով կարգացի պ. Ն. Դաւթեանցի նամակը, որ նկարագրում էր թէ ինչ անազնի դժուարութիւնների է հանդիպել պ. Թաւրիզի իր այդ ձեռնարկութեան մէջ:

Դեռ մասնագիտական կնոյ կրթութեան համար երեք հարիւր հազար ռուբլի—այդ դեռ քիչ է: Պէտք է կուել եւ ստակալի, քարացած նախապաշարմունքների դէմ, ոտի տակ տալ նրանց: Յիշում էք, ոտկերան Համիդը նորերումս արգելեց, որ մասնագիտական ընտանիքներում եւ քաղաքական կրթութիւն տարածվի: Իսկ մեզանում, ուր մասնագիտականութիւնը այդպիսի արգելի կարօտ էլ չէ, գտնվում է մի հասարակ վաճառական, մի Հալի, որ յանգնում է իր ցեղի դարձուր նախապաշարմունքներին դէմ գնալ, ինչպէս ասում են, ճակատի պնդութեամբ, զօռով փաթաթել թուրք հասարակութեան չլինելի մի այնպիսի հիմնարկութիւն, որի օգտակարութիւնը հասկանալու համար կարմիր սուլթանին չը պէտք է դիմել, այլ Եւրոպային:

Եւ գլուխ է բերում այդ մեծ գործը: Դուրս է բերում յամառ տոկոսներեւանք, տարիների ընթացքում կուելով, Հասարակութեան անտարբերութիւնը, թշնամական տրամադրութիւնը չէ յուսահատեցնում այդ մարդուն: Տեսնել էք այդպիսի բարեգործ: Մի բարեգործ, որ զօռով է անազնի գումար տալիս, որ եռանդուն կերպով հարկադրում է ընդունել իր տուածը:

Եւ գտնել չեմ ձանաչում այդ տեսակ բարեգործ: Մեզանում հարուստ մարդու դրութիւնը բոլորովին ուրիշ է: Մեզանում հասարակութիւն ինչն է խնդրում, աղքատ, եւ տուող չը կայ: Մեր բարեգործները դեռ պէտք է երկար ու բարակ աղաչանքներ լսեն, խոնարհ երկրպագութիւններ տեսնեն, իրանց քմահաճութիւնները ցոյց տան, հասարակութեան գլխին մոտեն տեսակ խաղան եւ ապա, հարիւր ու մի տեսակ տանջելուց, քաջքնուց յետոյ, կը տան մի բան: Զր մոռանանք ամենազրկաւորը: Հայ բարեգործի իւրաքանչիւր կօպէկը պիտի հարիւրաւոր թաւրիներով փառաբանվի «ի լուր աշխարհի», նա պիտի ստանայ «ազգային բարեբար» տիտղոս, պիտի պաշտօնունքի տառակայ դառնայ: Ուրիշ կերպ նրա գրպանից կօպէկ չի դուրս գալ:

Իսկ Թաւրիզի: Նրան հայոյում են, նրան զիմադրում են, անիծում են, բայց նա, այնու ամենայնիւ, տալիս է Դուք չէք ուզում բարեբարութիւն. չէ, եւ կանեմ ձեզ բարեբարութիւն, կանեմ հակառակ ձեզ կամքի, զօռով:

պ. Լինչ ենթադրում է թէ հայերը նախաձեռնար են համարում այս վերջինը: Այլ սակայն կայ եւ մի երրորդ միջոց, որը տակաւին համառակ է, կամ մի օր գուցէ հաւանական դառնայ: Այն է թէ Թիւրքիան երբ եւ ինչ կամ պիտի համազօր կամ պիտի ստիպվի լքել զերին հեռացնել դէպի Գիւրգիստանի ներքը, եւ Թաւրիզի հայերին կառավարելու իրանց սեփական գործերը: Թէ արդեօք այս հնարանք պիտի լինի թէ ոչ, այդ կախված է Ռուսաստանից, որ մինչեւ հիմա քաջակ է Թիւրքաւայրի բերք իր ուսերի վրա առնելուց, եւ դեռ արգելք է եղել այնպիսի բարենորոգումների, որոնք կարող էին խոչընդոտվել իրանց կանխելու հայկական գաւառները եւ ճանապարհ բանալու: Դէպի Պարսից ծոցը: Այս ամենը սակայն ծանրակշիւ հարցեր են թերթի մէջ զննութեան առնելու համար: Մենք միայն այս կարող ենք ասել, թէ ով որ փափագում է ծանօթութիւն առնել ու հմտանալ խնդրի հետ, պէտք է ուսումնասիրէ այս հետաքրքրական եւ կարեւոր գիրքը:

Պահպանողական «Morning Post», «Թայմս» յետոյ անդրադառնալ այս ազդեցիկ թերթի, հետեւեալ կերպով է խօսում. «Պ. Լինչ արդէն ստացել էր բարձր համբաւ, որպէս ուղարկող ուսումնասիրող այն ժողովրդի, որի ցաւերը զբաղեցրել են Եւրոպայի դիւանագիտութիւնը վերջին քսան տարիների ընթացքում: Այն գրութիւնները, որ նա հրատարակեց 1896 եւ 1897-ին ուսումական եւ թրքական

եւ կը յարթեմ, կը ջարդեմ ձեռք յամառութիւնը, ձեռք յամառութիւնը, եւ ընդունել կը տամ ձեզ այն հիմնարկութիւնը, որից դուք սարսափում էք:

Այս տեսակ էլ բարեգործութիւն... Որոշում վանեցէք, առաջին անգամն էք տեսնում այսպիսի երեւոյթ:

Բագուի հայերը, ինչպէս հաղորդել էր «Մշակ» թղթակիցը, թէ եւ ներկայ էին դպրոցի բացման հանդէսին, բայց համակրական եւ ոչ մի խօսք չառաջին աւելի քան տարօրինակ բարեբար Թաւրիզին: Եւ մասամբ հասկանում եմ այդ լռութեան պատճառը: Մեր, հայկական բարեբարութեան տեսակէտից, պ. Թաւրիզի արածը ուղղակի անխելութիւն է: Ինչպէս երեք հարիւր հազար տալ, եւ անէծքներ ու հայոյանքներ լսել... երեք հարիւր հազար—եւ ոչ մի հատ թաւրի, ոչ մի «անմահութեան» տիտղոս... Դա ուղղակի նշանակում է գցել փողի, հարուստի, աղայի ամբողջ վարկը, դիրքը, միտքը:

Բայց դուք, ընթերցող, ի հարկէ հայ բարեբարների» տեսակէտից չէք վերաբերվի բագուցի Հալիի այդ քաղաքացիութեան նիւթ խաւար ու տգէտ մասնագիտական անբոխ տեսակէտից անէծքի բան է իդակաւ բարեկարգ, պաշտօնական դպրոցը, մենք հօ գիտենք, թէ ինչ բան է նա եւ ինչ մեծ գործ պիտի կատարէ: Առաջին մասնագիտական իդակաւ դպրոցը ամբողջ Ռուսաստանում: Սա բաւական է, որ իմանանք թէ ապագայ սերունդները ինչ պիտի ասեն այդ անգրագէտ վաճառական թերթի մասին...

Էլ չասենք թէ հայ միլիոնատէրը ոչինչ չէ անում այն պատճառով, որ ագէտ է: Հայ հարուստներին պաշտպանող այս առասպելը ոչնչացրեց թուրք Թաւրիզի...

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Սեպտեմբերի 18-ին

Հողագործներից շատերը արդէն վերջացրել են իրանց հացահատիկների կառելը, միւսները շուտով վերջացնելու են: Այս տարվայ հացի բերքը Նոր-Բայազէտի գաւառում՝ քիչ բացառութեամբ՝ աջող կարելի է համարել:—Այն յոյսերը, որ ռաչպատ գաւառակարգը դրած ունէր այս տարվայ հացի արդիւնաբերութեան վրա, չարաբացան, քանի որ բերքը ընդհանրապէս միջակից պակաս է: Տորենը, գութնումով հերկած եւ պարարտ արտերում, արդիւնք ունեցաւ մի դեմատինից (6 չուան) մօտաւորապէս 10 սայլ հացաբոյս, իսկ սայլը արդիւնաբերեց 6—7 պուղ հացահատիկ, այն ինչ չորոքով վարած, հետեւապէս «խոզան» անուանված հողաբաժինը, արդիւնք ունեցաւ չուանը միայն մի սայլ հացաբոյս, այսինքն մի դեմատինից ոչ աւելի քան 6 սայլ, իսկ տեղ-տեղ, աւելի յոգնած տափերում 5 սայլ միայն, որը սակաւ բացառութեամբ հացահատիկ է տալիս 20 լիար կամ 6 պուղ: Գարին նոյնպէս բաւարար արդիւնք չունեցաւ. մի օրավար հողը, որ հաւա-

խլանութեանց հպատակ հայ ցեղի մասին, ցոյց էին տալիս զիտողութեան ճշգրտութիւն եւ չը նախապաշարվող ընտելութիւն—բարեմատութիւններ, որոնք հասարակութեանը ցանկալի դարձրին եւ աւելի տեղեկութիւններ ստանալ մի եւ նոյն աղբիւրից... Ոտեւում հայկական հարցին վերաբերող կէտերի մասին, յիշեալ թերթը գիտել է տալիս, թէ «Ստուգել, նրանց մտաւորական յատկութիւնները, նրանց գիւրգրգիւր կորովը եւ լարված ծրանքնութիւնն է, ինչ որ դարձնում է հայկական հարցը Թիւրքիայում աւելի դժուարալուծելի քան Լիբանանի դիւրագիտելի կամ եւրոպական Թիւրքիայի ջրիտառնայ ցեղերի հարցը: Զր կայ թրքական Հայաստանի մի որոշ միջավայր, ուր հայը ազգաբնակչութեան գերակշռութիւն կազմէ, բացի գուցէ վան քաղաքում, մինչդեռ նրանց գործունէութիւնը ակնեւ եւ փոքր-Ասիայի մի ծայրից միւսը: Միւս դժուարութիւնն այն է, որ նրանց նախնական հայրենիքը սահմանադրուի երկրի է հակառակ կայսրութիւնների միջեւ, որպէս է աշխարհագրական մեծ սխառութիւնն էնքաւոր, եւ մասամբ գրաված է բազմաթիւ օտար ցեղերով... Պ. Լինչի գիրքը տալիս է մեզ շատ հիմնալի պատկերներ հայ ժողովրդի եւ նրա ապրուստի եղանակի մասին, իսկ տեսարանների նկարագրութեան վերաբերմամբ հեղինակը միշտ պիւրճախօս է: Անիի եւ ուրիշ պատմական հին քաղաքների աւերակները այցելված եւ զննված են յարգամեծար խնամքով, եւ որքան մարդ

ասր է 4 չուանի (աւելի քան 3/4 դեմատին), արդիւնաբերում է պարարտ բաժիններում 6 սայլ հացաբոյս, մինչդեռ յոգնած եւ «մնացած» (խօզան) տեղերում՝ տալիս է միայն 4 սայլ, որից ստացվում է 6—7 պուղ հացահատիկ, եւ յաճախ՝ արանց կէտը, մինչդեռ աստաւարիներում մի սայլ հացաբոյսը դարձի է արտադրել 15 պուղ:

Միջին թուով հացի արդիւնքը այսպէս կարելի է դասաւորել.—ցորենը պարարտ հողերում արդիւնաբերեց 50/0, միջակ տեղերում՝ 30/0, իսկ յոգնած արտերում՝ միայն 20/0: Գարին առաջին կարգում՝ 30/0, երկրորդում՝ 20/0, իսկ յոգնած տեղերում՝ միայն սերմի քանակութիւնը:

Այս տարի հէնց գարնան սկզբից սկսած պարենաբար եղանակները վատ ազդեցութիւն ունեցան ցանքների վրա: Ցանկու. միջոցին, հակառակ անցեալ տարիների, տիրում է չոր քամի՝ առանց անձրեւի, այնպէս որ ցանքի ամբողջ սեզօնում, մօտ 2 ամիս, ոչինչ անձրեւ չեկաւ, հետեւապէս սերմը գրգռվում էր չոր հողի մէջ, որի ազդեցութեամբ աճեցողութիւնը աստիկ դանդաղում էր: Ապա, երբ սկսեցին անձրեւները, բուսականութիւնը սկսեց կամաց կամաց ծլեր արձակել եւ աճել, որից յետոյ տեղեկին տնընդհատ անձրեւներ, որոնց հետեւանքն այն եղաւ, որ արտերում հացաբոյսերի հետ խառն բուսածն փասակաւ բոյսեր եւ աւելորդ խոտեր, որոնք միշտ արգելք են դառնում հացաբոյսի աճեցողութեան: Դրանից յետոյ սկսվեց դաշտային միւսերի արշաւանքը. այդ կենդանիները այն աստիկանք բազմաթիւ են մեր արտերում այս տարի, որ ամբողջ տարածութիւններ գութնի պէս հերկել եւ փոսեր ու ակօսներ են չինել, մեծ-մեծ թումբեր ու հողաբլուրներ կիտելով իրանց բների ու փոսերի առաջ: Մուկը մանաւանդ մեծ վնասներ հասցրեց գարու արտերին, եւ զարմանալիս այն է, որ նրանք, չուկելով գարին հասկերը ցորենից (մեզանում ցանում են նաեւ ցորենը գարու հետ խառն, որ կոչվում է «քարդիկայ») աւելի նախապաշարմունքիւ են տալիս գարին հասկերը կրել իրանց բուսել, քանի որ, ինչպէս բացատրում են շատերը, նրանց ատամները աւելի ընդունակ են մանապէս գարու հատիկները, քան ցորենինը: Ուրեք նմանապէս զերծ չը մնաց միւսերի աւերմունքից. անազնի տարածութիւններ չայիրներում արշինանց ակօսներ են փոքրել եւ հողերը ափերում կիտել կռնաձեւ բլուրներով: Լսեցինք այսպիսի մի բան. որքան ուղիղ է՝ չը գիտեն: Իբր թէ միւսերից մէկը կանգնում է, միւսը հասկերը դարձում է նրա մէջքի վրա եւ պոչը ձգում-տալիս է բերանը եւ այդպէս տանում են իրանց բուսը՝ ձմեռվայ պաշար պատրաստելու համար: Մեր աչքով տեսել ենք, որ շատ հողագործներ իրանց արտերում չուսկներով հացահատիկների հասկեր են դուրս հանել միւսերի բներից, որտեղ նրանք չարքով իրար վրա մազուր դարձել են այնպէս, ինչպէս խնամութիւ պաւկերները իրանց ճոթերն են դարձում...

Ձիթապտուղները նոյնպէս շատ սակաւ ար-

առաջ է գնում գրքի ընթերցանութեան մէջ՝ այնքան աւելի գործնական լուսաբանութիւն է ստանում երկրի հարցերի եւ ազգի աւանդութիւնների մասին, որոց վերաբերմամբ Եւրոպայն մոյնքան շատ է լսել: Բայց իսկապէս երկրի ֆիլ զի օ գր ա ֆի ա յի մասին իր կատարած կանոնաւոր զննութիւնների մէջ է կայանում, որ հեղինակը մնայուն գնահատութեան արժանի է դարձնում իր գործը...:

St. James Gazette-ը աւելի ծանրանում է գրքի գեղարուեստական կողմի վրա: «Իբր ճանապարհորդական եւ ընդհանր մի գործ՝ պ. Լինչի երկու չեղ աստիկանք» «Armenian»-ն մեծապէս այլադան ու հարուստ են: Նախ եւ առաջ պատկերների կողմից գիրքը կատարելապէս լիքն է եւ մեծ խնամքով պատրաստված: Իսկ այս առաջնակարգ կարեւորութիւն ունեցող մի հանգամանք է այնպիսի մի գրքի համար, որը գործ ունի հնախօսութեան եւ արուեստի բեղմնաւոր մի դաշտի հետ եւ որը միաժամանակ ընդգրկում է մարդկային ձեռագործի ամենանոր տեղագրական ուսումնասիրութիւն եւ երկրի բնական կերպարանքը: Մարդ մասնագետ է հնագոյն ճանապարհորդների այս ուղղութեամբ թափած ճիգերի մասին, որինակ Շարդէնի եւ Տալինիէի: Նրանք առանց լուսանկարի եւ առանց գիտական գործիքների էին, այլ սակայն նրանք էլ գիտէին պատկերագրողներու յարգը: Գծագրել են չինգեր, կամ դուրս են բերել վանայ եւ ուրիշ տեղերի պլանները. բայց ինչ արդեօք պիտի

դիւնք ունեցան, այնպէս որ շատ տեղեր սօրուկը, կառաւար եւ այլն իրանց սերմը չարտադրեցին, իսկ շատ դէպքերում 2-ով միայն աւելի արդիւնք ունեցան: Միւսերը դրանցում էլ իրանց հունձն էին կատարել: Մոռացաւ ասել, որ շատ գարու արտերում մինչեւ անգամ հատաւորներով մուկը կորել եւ վնասել էր: Բայց աւելի հետաքրքիրն այն է, որ հերկած եւ պարարտացրած արտերում, որտեղ ցորեն էր ցանված, միւսերը ոչինչ վնաս չէին հասցրել, այն ինչ դրանց մօտիկ հողաբաժիններում, որոնք հերկած չեն եղել գութնային, միւսերը ուղղակի աւերմունք են գործել: Այս հանգամանքը ոչ ոք չէ կարողանում բացատրել: Հացի բերքի անաշտութեան պատճառով հացահատիկների գները շատ թանկ են այժմ, մի ժամանակ՝ երբ պէտք է աւելի է ժամանայ, քան թանկանայ: Միւս կողմից գների թանկութեան նպաստում են նաեւ կողմնակի գընողներ, որոնք հարեւան գաւառներից գալով մեր կողմերը՝ իրանց համար ուսուստի պաշար են առնում, գինը օրական բարձրացնելով:

Գ. Միւսանեանց

ՆԱՄԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 13-ին
Թոյլ տուէք ձեռ լրագրի միջոցով յայտնել մեր ընտանիքի խորին շնորհակալութիւնը այն հաստատութիւններին եւ անձանց, որոնք արտայայտեցին իրանց ցաւակցութիւնը դէպի մեր կրած ծանր վիշտը եւ պատուեցին Թիֆլիսի քաղաքապետի Պէրոզ Եւանգուլեանի յիշատակը:

Գրիգոր Եւանգուլեան

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ հաղորդում են, որ կիրակի, հոկտեմբերի 14-ին, Աւսլաւան ժողովրդական թատրոնում կը արվի այս տարվայ թատրոնական սեզօնի երկրորդ ներկայացումը՝ դերասան Տէր-Դաւթեանի մասնակցութեամբ: Ուղարկու են Մօլիերի «Սկապէն» արարքները:

Ներքին գործերի միջնորդութեան գիտական-տեխնիկական կոմիտէն հաստատել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից ներկայացրած այն նախագիծը, որով «Հէլիոս» ընկերութեան իրաւունք է տրվում ելկերաւան լուսաւորութիւն մտցնելու Թիֆլիսում: Այս պատճառով պօստ-հետադարձական գլխաւոր վարչութիւնը առաջարկել է Թիֆլիսի պօստ-հետադարձական շրջանի կառավարչին միջոցներ ձեռք առնել Թիֆլիսի հետախօսային եւ հետադարձական ցանցի պաշտպանութեան համար:

Հիմնվում է մի ընկերութիւն կէս միլիոն ռուբլի դրամադրով, որի նպատակն է ուսուսկան տնայնագործների արդիւնքները արտահանել Եւրոպայի գնահատելի շուկաները: Ընկերութիւնը մտադիր է բաժանմունքներ բանալ Լոնդոնում, Պարիզում, Բեռլինում, Վիէննայում եւ Մարսէլում:

ժողովին այդ հին ուղեւորները, եթէ տեսնէին այս ծայրայեղապէս զեղեցիկ պլանները, քորտէզները եւ պատկերները, որոնցով զարդարված են Լինչի աստիկանքը: Պ. Լինչի լուսանկարչական պատկերների վրա գործածված միագոյն (monotint) յաճախ վերին աստիկանի իրական արտայայտութիւն ունի: Այս յատկապէս աւելի դիտելի է մի քանի տեսարանների մէջ, ինչպէս օրինակ այն տեսարանների, որոնք պատկերագրողն էր պ. Լինչի արժանաւոր պատկերները: Արարատի գլուխը, Էյմիմանի եկեղեցիները, Անիի հրաշալի մայր եկեղեցու եւ ուրիշ բազմաթիւ չէնքերի, պատկերների հրապոյրը եւ իրականութիւնը գերազանցօրէն տպաւորիչ են: Թող հնախօսական ուսումնասիրողները դիտեն, օրինակ, թէ ինչպիսի կատարելատիպ իրականութեամբ են արտայայտված Ուոյալանքի, Անիի ու Առաքելոց եկեղեցու արեւմտեան պարպի եւ Հայաստանի միջնադարեան թագաւորութեան այդ հրաշալի քաղաքի ուրիշ հոյակապ չէնքերի պատկերների մանրամասնութիւնները: Առաւել վառ, աւելի կենդանի ծանօթագրութիւն կարելի չէ պահանջել այս պատկերների ու հետաքրքրական աւերակների վերաբերմամբ՝ քան ինչ որ պ. Լինչ ներկայացրել է իր սքանչելի ուսումնասիրութիւնների մէջ:

(Կը շարունակվի)

տասնամյակն ապառիտ փճոր մեղադրված Մորգովի, Նիկոլայի, Պիտերի, Բուրի-կովի, Օրովի, Պուլի, Ֆոկինի, Մարտինովի, Նաչկինի, Կոնի, Ջորժի, Բոնդարևի, Կու-լինի և Գրեչուկի արդարացի վերաբեր-մամբ բեկանել և գործը յանձնել զարգեալ նոյն պալատին նորից ճանաչող դատաւորների ուրիշ կազմով:

ՏԻԻՄԵՆ. Օրի գետաբերանում գտնված կը-մախքի ոսկորները մանրամասն ճանաչող երե-ւեց, որ կմախքը ոչ թէ մամոնտի է, այլ կէ-տի, որով աւելի մեծանում է գիտի արժէքը: ԿԻԵՎ. Դեմա գետի վրա նաւագնացութիւ-նը դադարեց:

ԿԱԶԱՆ. Վոլգայի նաւամատուցների մօտ այ-սօր այրվեցին հինգ շարքեր՝ խոնավութեամբ և ապրանքների պահեստներով: Պատահեց մարդ-կային զոհ. այրվեց մի գեղջիկուհի, որ կամե-նում էր իր փողերն ազատել:

ԲԵՐԼԻՆ. Այս երեկոյ հրատարակվեց յայտա-բարութիւն՝ թէ բաց կը թողնվի 35,880,000 գերմանական մարկ Մօսկովա - Կազանեան երկաթուղու օբիեկտներով և 11,660,000 գերմանական մարկ՝ Լոճի գործարանա-կան երկաթուղու օբիեկտներով: Փոխա-ռութիւնը բաց կը թողնվի Գերմանիա-ում սեպտեմբեր 17-ին, 96% կուրսով: Այս երկու փոխառութիւնները կազմում են միա-ցորդ հրատարակվիւք 80 միլիոն գերմանա-կան մարկի 40% երկաթուղային օբիեկտներ-րի, որոնք երաշխավորված են ռուսաց կառա-վարութիւնից:

13 հոկտեմբերի

ԱՍՏՐԱԽԱՆ. Աւագ քահանայ Յոհան Կրօն-չառակուն՝ քաղաքն այցելելու յիշատակի հա-մար դուռնան որոնց մանկական ապաստարան հիմնել նրա անունով:

ՀՈՌՈՄ. «Patria»-ի ասելով՝ Վատիկանի կա-ռավարութիւնը քայլեր արւա հիմնելու Պեկի-նում զեպանական ներկայացուցչութիւն:

ՅԻԿԱԳՈ. Կասսոն, նախկին ներկայացուցիչը համերաշխութեան մասին դաշնագիր կնքելու գործում, երկէ ետանդով հանդէս եկաւ պաշտ-պանելու դաշնագիրների քաղաքականութիւնը, ապացուցանելով որ միայն դաշնագիրների մի-ջոցով կարելի է կուել այն վտանգների հետ, որոնք սպառնում են ամերիկական առեւտրին:

ՊԱՐԻԶ. Մոսկով-Միլոմ հարկու հրացան յետ են տրված: Վաղը կը սկսվեն խուզարկու-թիւնները տներում: Ամեն ինչ խաղաղ է: Նախորդապետների ժամուրը շարունակում է յարձակվել Մեկին խմբի վրա այն պատճառով, որ նա ձայն տուց միջնորդութեան օգտին:

ՍԻՄԲԱ. Էմիր Արզուրադանի մահվան լու-րը ոչ մի յուզմունք չառաջացրեց Հերատում, ամեն ինչ այնտեղ նախկին դրութեան մէջ է: զորքը երդում տուց Էմիր Հաբիբուլլային:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԲԱՅՈՒԶԻ ՏԻՖԱԼԻՍԵԱՆ
ԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուլիտ, Վորոնոյի արձանի հանդէպ)

ա մ ե գ օ ր, բ ւ ց ր կ ի ր ա կ ի օ ր ե ի ց:

Ա Ռ Ա Յ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վերաբու-թեան, վերական (սիֆիլիս) և միզապեղ. հիւանդ.

Կ. Մ. Պիտերի—9—10 ժ. աչքի, ներքին և ներքային:

Կ. Բ. Գրեչուկ—12—1 ժ. ախտի, բթի և կ-կորդի:

Զ. Բ. Բարաբանեան—11—12 ժ. կանանց և երե-խայց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1½ ժ. ներքին և երե-խայց:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Ն. Ն. Ռոստամբեկով—5—6 ժ. վերաբու-թեան և մարմնի:

Ա. Ն. Եղալովի—6—7 ժ. ներքային (եղե-տաբայ), վնաս և մարմնի:

Գ. Ա. Բարաբանեան—7—7½ ժ. ներքին և երե-խայց:

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վար 50 կ. չբարձրացրէ ձրի ձամախորդի (կօն-տիլումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Յ. Առվաբեկ—տանը, ծաղկահատ և բժշ-կական մարմնամարդ. գիմն 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաբու-թեան

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Օր. Սարեանի

ԾԵՐՍԱԶԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄՆԴԱՆՈՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2

Նրեկոյեան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, առն Մարտիրոսեանցի:

(հ. 4.) 14—60

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՐՏ

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ

տալիս է մամուլը դատար հայերէնից, գեր-մաներէնից, նոյնպէս և հայոց գրականութիւ-նից: Հասցէն հարցնել «Մշակ» խմբագրատա-նը:

1—5

Հայ բեմի համար փոխադրվում է

ԴՕՍՏՕԵՎՍԿՈՒ

«ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ և ՊԱՏԻԺ»-Ը

(«Преступление и Наказание» 1—1

ՎՐԱՑ ԱԶԼԻԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, հոկտեմբերի 14-ին

Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը

Մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅԵՐ

կը ներկայացնէ

ԹԱԳԻ ՀԱՄԱՐ

Դրամա 5 արար., հեղ. Ֆ. Կոպպէի, թարգ.

Մ. Մանուէլեանի

Մասնակցում են 60 անձինք և երաժշտական

խումբը

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին:

Տեղերի գները սովորական են:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը խոնարհաբար խնդ-րում է պ.պ. անդամներին չորս բերել ընդ-հանուր ժողովի, հոկտեմբերի 15-ին, ե-րեկոյեան ժամի 10-ին, չը կայացած ժողովի փոխարէն, որ նշանակված էր սեպտեմբերի 30-ին:

(7 և 14) 2—2

ՏՆԱՅԻՆ ՃԱՇ

Հոկտեմբերի 1-ից, Բագում (Չաղրովայա և Վորոնոյի կայա փողոցների անկիւնում, ա. Մարաֆէեի) բացվում է

Ն Ո Ր Խ Ո Ն Ա Ն Ո Ց

յա տկապէս անային ճաշ պատրաստելու հա-մար:—Կը պատրաստվեն թէ եւրօպական և թէ մասնաւոր հայկական մաքուր, համեղ կե-րակուրներ, իսկ գները լինելու են համեմա-տաբար էժան, քան թէ հիւրանոցներում: Ծանկացողներին կուղարկվի տները՝ մեր ծա-ռայով և բոլոր յարմարութիւններով: Ամսով ճաշողները կրակի օրերին կը ստանան քաղց-րեղէն ձրի: Կը դուռնվեն նաեւ առանձին պատուէրներ:

4—6

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրադաճառնո-ցում, ընտիր թղթի վրա, չքեղ հրատարակու-թեամբ

Գ. Ս Ո Ն Դ Ո Ն Կ Ե Ա Ն Ի

Պ Ե Պ Օ

Կոմէդիա երեք արար. երկր. տպագ. ուղղա ծ գինը 50 կ.:

Նոյն գրատունը վաճառվում են հեղինակի և հետեւեալ աշխատութիւնները—

«Գիշերվայ սարը խէր է», կատակ. մէկ ա-րարութեամբ, երկր. տպ. ուղղա, գ. 30 կ.:

«Օսկան Պետրովիչը էն կինը», կատ. 1 արար. գ. 30 կ.:

«Ամուսններ», կոմէդիա հինգ արար. երկր. տպագր. ուղղա, գ. 1 ր.:

Դիմել՝ Թիֆլիս, в Центральную книжную торговлю.

(4.) 3—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհա-նուրի, որ Կովկասի պ. Կառավարչապետի կարգադրութեամբ, Թիֆլիսի քաղաքային խոր-հրդի ձայնաւորների առաջիկայ ընտրութիւն-ները կը կատարվեն երեք ընտրողական ժո-ղովներում, որոնցից առաջինում կը մտնեն ռուսականական 1, 2, 3 և 4 քաղաքա-մասերի ընտրողները, երկրորդում—5, 6 և 7 քաղաքաւանների ընտրողները, իսկ երրորդում—8, 9 և 10 քաղաքաւանների ընտրողները: Ձեռնամուխ լինելով ընտրողական ցուցակների կազմութեան, Քաղաքային Ուղարկւան հրաւի-րում է անշարժ կայքերի տեղերին մաքուր ի-րանց կալուածները գնահատական տուրքի ապագիւններից, որոնք հաշւած են մինչեւ 1901 թւի յուլիսի 1-ը: Սրա հետ միասին յայտա-բարվում է, որ այն անձինք, որոնք անշարժ կայքեր կամ առեւտրական-արդիւնաբերական ձեռնարկութիւններ ունեն քաղաքի գնահատան մասերում, բարեհաճեն առաջուց յայտնել Ուղ-արկային, թէ իրանք ընտրողական ժողովներից որին են կամենում մասնակցել ձայնաւորների ընտրութեան ժամանակ:

(4. չ. 3—3

ԱՄԵՆԱՑՈՅՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



Բ Օ Յ Ե Ա Լ Ն Ե Ր



Դ Ա Շ Ն Ա Մ Ո Ւ Ր Ն Ե Ր



ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻ-ԹԱՌՆԵՐ, ՖԼԵՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՅ-ՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼԵ, ԵՒ ԱՅԼԵ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-նը կարելի է վճարել մաս-մաս:

Պ Բ Ե Յ Ս Կ Ո Ւ Ր Ն Տ Ն

ուղարկվում է ձրի:

ԵՐԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՅՆԱ-ԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Է Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Նրաժշտական

Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна,

ТИФЛИСЬ.

Дворцовая у

3. Банжа.

(Կր.)

Գ Ո Ւ Տ Տ Է Ն Բ Է Ր Գ

գրախանութում վաճառվում են

Է. Տէր-Գրիգորեանի աշխատութիւնները՝

«Ուշի թուրը, ֆարս-վոդ. 1 արար.—50 կ.

«Մօղա», կոմէդիա մէկ արար.—50 կ.

«Կռուպատմադ ես էի», կոմ.—վոդ. 2 ար. 50 կ.

«Երկու սիրահար», կատակ. 1 արար.—50 կ.

«Սէր կամ մահ», պիէս մէկ արար.—50 կ.

«Ջրկանքի զոհ», դրամա 4 գործ. 6 պատ. 80 կ.

«Չարք», կատակ. մէկ արարութեամբ—50 կ.

«Սարափիկի իրողութիւն» (բեմ. պատմ.)—50 կ.

«Վայրենի», կատակ. մէկ արար.—50 կ.

«Բարեգործ. դիմակի տակ», դրմ. 5 ար.—1 ր.

«Դաժոկիւան սուր», դրամա 3 ար.—75 կ.

«Ոնրագործի ընտանիքը և Հերբուլէս (երկու գիրք) թարգմ.—2 ր.

«Ամուսններ», կոմ. 5 ար. Գ. Սուրդուկ.—1 ր.

«Պէպո» » 3 » 30 կ.

«Օսկան Պետրովիչը էն կինը», կատակ 1 ար. 30 կ.

«Տիգրանուհի», դրամա 5 արար., հեղ. Մա-նուէլեանի—50 կ.

«Կեղծ աղնուհի», Մօլիերի, Թ. Յ. Պ.—40 կ.

«Պոլիդոտ», կատակ. 4 արար., Ալֆոնս Դոդէի, թարգմ. Մ. Ն.—50 կ.

«Բանաստեղծը» կատակ. 1 արար. Փառնակէ-կէսի—25 կ.

«Պատի», կոմէդիա 4 գործող. Չուգերմանի, թարգմ. Թարս.—50 կ.

«Տղամարդկանց խրատ», կատակ. 3 արար.

Մօլիերի, Ա. Դ. 30 կ.

«Շէքսպիր և իր Համլէտ օղբերգութիւնը, Ա-դամեանի—1 ր.

«Մարիա Ստիւարտ», օղբերգ. 7 արար. Շիլ-լերի, թարգ. Գ. Բարխուդարեանի—50 կ.

«Մարիանա», դրամա 3 գործ., Էյզաբայի, թարգմ. Ա. Կրասնիկեանի—1 ր.

Դիմել՝ Թիֆլիս. Книжный магазинъ «Гут-тенбертъ», Г. Галустану, Лорисъ-Меликов-ская, № 11.

2—2

Պատիւ ունեւ յայտնելու յարգելի հասարակութեան և վաճառա-կաններին,

որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ

Ա. Մ Ե Ր Ի Կ Ա Կ Ա Ն Բ Է Ջ Ի Ն Է Կ Ա Լ Օ Շ Ն Ե Ր

ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց և երեխաների Ուստի խնդրում եմ յարգելի անուններ-րին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք: Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բա-ւական զիջում: Նոյնպէս ստացել ենք ՊՐՈՎՈՂԻԿ ԿՈՂԻՄԻ ԿԱՆՈՇՆԵՐ, ամեն տեսակի Պա-տուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին: Մեզ մօտ ծախվում են նոյնպէս կօշիկները փափկացնող իւղեր և փայլ տուող գունաւոր գլաղուրներ: Նոյնպէս ծախվում են արտասահմանի և Ռուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ և կօշիկապական ամեն տեսակ գործիքներ:

Մեր հասցէն. Թիֆլիս, Армянский базаръ, Братья Яргуловы.

Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргуляцъ.

(չ. 4.) 20—20

Խնդրեմ ուշադրութիւն դարձեք

Ստացված է մեծ քանակութեամբ ամեն տեսակ պատրաստի ոպիտակեղէն՝ կանանց և տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլիկներ, նասկներ, ձեռնոցներ, մետաւի կլէտիկաներ սեղա-նի համար, նոյնպէս բաւթաներ, զայթաներ՝ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի սարքեր, այսինքն հաշիւաներ, չիթիւներ, մետաքսէ աղուխներ և այլն:

Թիֆլիսի բաժանմունքը Բագում:—Պարապետ:

Ե Ղ Բ. Մ Է Լ Ի Ք-Մ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Հրատարակիչներին և Հեղինակներին

Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն Ի

ՆՈՐ ԲԱՑԱՄ

Ա Ր Ա Ք Ա Տ Ի Պ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Ընդունում է տպարանական ամեն տեսակ պատուէրներ: Ստացված են մեծ քանակութեամբ հայերէն և ռուսերէն և ժամամբ էլ ֆրանսերէն նորագոյն ձեւի տառեր և գեղեցիկ զարդա-րանքներ:

Տպագրութեան պայմանները չափ ձեռնառու են, որոնք առանձին կը յայտնվեն ցան-կացողներին:

Տպարանի հասցէն՝ Александрополь, Скоропечатня Степаняна.

3—5

ՀԱՃԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ VI ՇՐՋԱՆ

Խ Ե Չ Ե Տ Ո Ւ Ր Ե Ի Ր Ը